# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| *Ապրանքի* | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Հ/Հ* | *ԳՄԱ կոդ (CPV)* | *անվանումը* | *տեխնիկական բնութագիրը* | *Չ/Մ* | *միավոր գինը /ՀՀ դրամ* | *ընդհանուր գինը/ՀՀ դրամ* | *ընդհանուր քանակը* | *մատակարարման* | | |
| | | | | | | | | *հասցեն* | *ենթակա քանակը* | *Ժամկետը* |
| 1 | | քարտի միջոցով ձեռք բերվող սնունդի փաթեթ | «Գավառ համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված <<աջակցության քարտի տրամադրման» ծրագրի շրջանակում, սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին տրամադրելու համար անհրաժեշտ է ձեռք բերել 150 հատ քարտ: Քարտերը տրամադրվելու են մատակարարի կողմից:<br><br>Քարտի միջոցով տրամադրվող սնունդի փաթեթների թիվը ամսեկան սահմանվելու է Գավառի համայնքնպետարանի կողմից և որպես սոցիալական ծառայություն մատուցվելու է Գավառ համայքում :<br><br>Պատվիրատուի կողմից քարտը ֆինանսավորվելու յուրաքանչյուրը 20000- ական ՀՀ դրամով ամսեկան սպասարկման ժամկետով , որով հնարավոր կլինի ձեռք բերել ներքոնշյալ պարունակությամբ սննդամթերքները, որոնք շահառու ընտանիքները կարող են ձեռք բերել միանվագ:<br>Շահառու ընտանիքի կողմից քարտի միջոցով ձեռք բերած փաթեթի կտրոնը հետ է վերադարձվելու պատվիրատուին:<br><br>**1.▪Տավարի մսի պահածո - 2 տուփ,** առնվազն 0,5 կգ, բարձր տեսակի, հերմետիկ փակ մետաղական տարաներով, մանրէազերծված: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 54%-ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավել 17%-ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%:<br>**2.▪Բրինձ - 3 կգ**, բարձր տեսակի երկար բրինձ, սպիտակ կամ սպիտակի տարբեր երանգներով, մաքուր, բրնձին բնորոշ համով և հոտով, առանց կողմնակի համի և հոտի, խոնավությունը՝ 15%-ից ոչ ավել, թթվայնությունը՝ ոչ ավել 2օT: Փաթեթավորումը | փաթեթ | 20 000 | 3 000 000 | 150 | Ք. Գավառ Գ. Լուսավորչի 12 | 150 | Պայմնագարի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 10-ը ներառյալ: |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | գործարանային՝ 1կգ, սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 50%:<br>**3.▪Հնդկաձավար - 3 կգ**, բարձր տեսակի, մաքուր, խոնավությունը՝ 14%-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5%-ից ոչ պակաս: Փաթեթավորումը գործարանային՝ 1կգ, սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 50%:<br>**4. Ոսպ - 3 կգ**, խոշոր չափի, մաքուր, չոր՝ խոնավությունը 14,0-17,0% ոչ ավելի: Փաթեթավորումը գործարանային՝ 1կգ, սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 50%:<br>**5.▪Ցորենի ալյուր - 2 կգ**, բարձր տեսակի, առանց կողմնակի համի և հոտի, առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15%-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0,55%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0%: Փաթեթավորումը գործարանային՝ 2կգ, սննդի համար նախատեսված թղթե տոպրակով՝ համապատասխան մակնշումով:<br>6. **▪Շաքարավազ – 3 կգ,** սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավելի, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավելի: Փաթեթավորումը գործարանային՝ 2կգ, սննդի համար նախատեսված պոլիէթիլենային կամ թղթե թաղանթով՝ համապատասխան մակնշումով: Պիտանելիության մնացորդային ժամկետը՝ | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս:<br>7.▪**Մակարոնեղեն – 6 տուփ,** մակարոն սովորական, լապշա, վերմիշել և այլ կտրվածքների, անդրոժ խմորից, խոնավությունը՝ 12%-ից ոչ ավելի, մոխրայնությունը՝ 2,1–ից ոչ ավելի, թթվայնությունը՝ 5%-ից ոչ ավելի: Փաթեթավորումը գործարանային՝ 400գր, սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով:<br>▪**Խտացրած կաթ - 2 տուփ,** մետաղյա լաքապատված տարայով 380-400գր, շաքարով, բարձր տեսակի, պաստերիզացված կաթի արտահայտված համով, առանց կողմնակի համի և հոտի, միատարր ամբողջ զանգվածով, առանց զգալի զգայաբանորեն շոշափելի կաթնաշաքարի բյուրեղների, խոնավությունը՝ 26,5%-ից ոչ ավելի, սախարոզը 43,5%-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5%-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48OT-ից ոչ ավելի, յուղայնությունը՝ 8,5%: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70%:<br>9. ▪**Թեյ 100գր – 2 տուփ,** սև ցեյլոնական թեյ, ցեյլոնական թեյն ունի կարմիր-շականակագույն, գրեթե սև գույն, թունդ և հագեցած համ: Փաթեթավորումը գործարանային՝ 100գր: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70%:<br>10.▪**Տոմատի մածուկ – 1 հատ,** առնվազն 1000գր, բարձր տեսակի, ապակե տարայով: Պիտանելիության ժամկետը՝ նշված լինի դաջվածքով:<br>11.▪**Արևածաղկի ձեթ 1լ - 4 շիշ,** ռաֆինացված (զտված): Պատրաստված արևածաղկի սերմերի լուծման և ճզման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված: Փաթեթավորումը գործարանային՝ շշալցված 1 լիտր տարողությամբ շշերում:<br>Սննդամթերքների փաթեթների վրա ընթեռնելի ձևով պետք է նշված լինի անվանումը, քաշը, արտադրման և պիտանելիության ժամկետները, արտադրող երկիրը, հասցեն, եթե ապրանքը արտասահմանյան արտադրության է, ապա՝ ներմուծող | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպության անվանումը, ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:<br>Թվարկված բոլոր սննդամթերքների անվտանգությունը պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» TPTC 021/2011, փաթեթավորումը՝ «Փաթեթվածքի անվտանգության մասին» TPTC 005/2011 տեխնիկական կանոնակարգերին:<br>12.**Ձու: 30 հատ** Ձու սեղանի կամ դիետիկ, 1-ին կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:<br>**13.Աղ 1հատ .**կերակրի բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:<br>Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքները ենթակա են ետ վերադարձման:<br><br>Նշված բոլոր ապրանքները մատակարարի կողմից պետք է մատակարարվի պատվիրատուի կողմից տրամադրված ցուցակին համապատասխան անձանց՝ որակյալ ամուր, անթափանց, առնվազն 20կգ տարողությամբ պոլիէթիլային տոպրակով, համապատասխան տոպրակի մեջ դասավորված բոլոր 13 անուն ապրանքների փաթեթները: Փաթեթի գինը իր մեջ ներառում է ապրանքների փաթեթավորումը, ինչպես նաև տրամադրում : | | | | | | | |

***Մասնակցի կողմից պարտադիր պետք է ներկայացվի առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն:***